ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հունվարի 2021 թվականի N 01

«ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արարատ Չերքեզյանի 12.01.2021թ. թիվ Չ-08 դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Արարատ Չերքեզյանին իր անձնական օգտագործման Մերսեդես մակնիշի 60 DN 060 պետ համարանիշի ավտոմեքենան շահագործելու ՀՈԱԿ-ի կարիքների համար:
2. ՀՈԱԿ-ին տրամադրված վառելիքից (սեղմված բնական գազ) ավտոմեքենայի շահագործման համար ամսական օգտագործել 150 կգ. (հարյուր հիսուն):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հունվարի 2021 թվականի N 02

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՎԻՐԱՀԱՅՈՑ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ 8 ՔԱՐԱՄՇԱԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ, 06-007-0104-0044 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՐԿՈՒ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սիմակ Ջիլավյանի կողմից ներկայացված 15.01.2021թ. թիվ Ջ-19 դիմումը, 28.10.2020թ. թիվ 28102020-06-0032 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «ՍՈՒՍՍԱՄ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ *որոշում եմ.*

1. Հաստատել Ստեփանավան քաղաքի Վիրահայոց փողոց 1-ին փակուղի 8 քարամշակման արտադրամաս հասցեում 06-007-0104-0044 կադաստրային ծածկագրի տակ գտնվող անշարժ գույքի տարանջատման արդյունքում առաջացած անշարժ գույքերի նոր փոստային հասցեները և հողամասերի մակերեսները, համաձայն «ՍՈՍՍԱՄ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղագրական հատակագծերի.
   ա. 0.31928 հա հողամասի և հողամասում առկա շենք շինությունների փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան, Վիրահայոց փողոց 1-ին փակուղի 8 քարամշակման արտադրամաս:
   բ. 0.03024 հա հողամասի և հողամասում առկա շինության փոստային հասցեն՝ ՀՀ մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Վիրահայոց փողոց 1-ին փակուղի 8/1 պահեստ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունվարի 2021 թվականի N 03

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԲՈՆԴԱՐԵՎԻ 6/1 Ա ՀԱՍՑԵՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմենուհի Հովհաննեսի Խաչատրյանի կողմից ներկայացված 11.01.2021թ. թիվ Խ-07 դիմումը և 24.06.2011թ. N 2503961 անշարժ գույքի (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 -րդ հոդվածի 1 -ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 -Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Բոնդարևի փողոց թիվ 6/1Ա հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության և խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան Բոնդարևի փողոց թիվ 35:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հունվարի 2021 թվականի N 04

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԼԲԵՐՏ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի բնակիչ Ալբերտ Քալաշյանի 24.12.2020թ. N Ք-423 դիմումը, Ստեփանավան համայնքի ավագանու 22.03.2019թ. թիվ 31-Ա որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի վարչական տարածքից 0.3 հա արոտ 06-007-0167-001 ծածկագրից վարձակալության իրավունքով տրամադրել Ալբերտ Քալաշյանին համաձայն կից տրվող հողամասի հատակագծի:
2. Ալբերտ Քալաշյանի հետ կնքել հողամասի վարձակալության իրավունքի պայմանագիր 3 տարի ժամկետով, վարձավճարի չափ սահմանելով՝ տարեկան 6000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ